

Կոմիտաս-150

«Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան»: ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ 150 տարի առաջ հենց այսօրն է ծնվել Սողոմոն Սողոմոնյանը՝ որին վիճակված էր դառնալ #Կոմիտաս՝ կոմպոզիտոր, բանահավաք, երաժշտագետ, կատարող, մանկավարժ... Կոմիտաս, որը մոռացությունից փրկեց հայ երաժշտության հազարավոր նմուշներ, հայ հոգեւոր եւ ժողովրդական երաժշտության գլուխգործոցները:



Հայաստանի ազգային գրադարանում է պահվում է Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված հարուստ հավաքածու՝ գրքեր, ալբոմներ, նոտաներ, որոնք թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում կցուցադրվեն հոկտեմբերի 8-ին: Այդ օրը մեծ վարդապետի կյանքին եւ գործունեությանը նվիրված ամփոփ զեկույց կներկայացնի Մատենագիտության եւ գրադարանավարության բաժինը:

Իսկ մինչ այդ՝ Կոմիտասի երգ դարձած բանաստեղծությունները երգիչ, երգահան Վահան Արծրունու, ֆլեյտահար Նելլի Մանուկյանի և Վելվետ լարային քառյակի կատարմամբ՝ Ազգային գրադարանի կազմակերպած «Կոմիտաս 150» միջոցառման շրջանակում: